ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 8, 20 հունիսի 2022թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 1,950,295 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 10,400 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

Սույն թվականի հունիսի 17-ին ժամը 12:00-ին կայացավ Բանկի բաժնետերերի տարեկան ժողովը:

Բանկի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է առ 2022թ. մայիսի 4-ը, ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:

Տարեկան ժողովի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

Օրակարգ

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության հաշվետվությունը 2021թ. տարեկան գործունեության մասին:
3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 2021թ. տարեկան արդյունքներով շահաբաժիններ վճարելու մասին:
4. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի բաշխման համամասնությունների մասին:
5. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ աուդիտն իրականացնող անձի հաստատման մասին:
6. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի ընտրության մասին:

I. Շահութաբաժինների վճարման վերաբերյալ.

17.06.2022թ. տարեկան ժողովը որոշեց 2021թ. արդյունքներով բանկի բաժնետերերին վճարել շահաբաժիններ՝ մեկ բաժնետոմսին 250 ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով ս.թ. հուլիսի 1-ից, բանկի Խորրհրդի հաստատած կարգով:

II. Բանկի կառավարման մարմինների անդամների փոփոխության վերաբերյալ տեղեկություններ.

17.06.2022թ. տարեկան ժողովը որոշեց հաստատել բանկի Խորհուրդը բաղկացած 6 անդամներից /քվեարկությամբ ընտրված՝ 5 անդամ և առանց քվեարկության ներառված փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչ/, հետևյալ կազմով

Սարիբեկ Սուքիասյան՝ ինժեներ տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու
Ռուբեն Հայրապետյան՝ տնտեսագետ-հաշվապահ
Լուիզա Պետրոսյան՝ տնտեսագետ-մաթեմատիկոս
Պեր Ֆիշեր՝ տնտեսագետ
Հրանտ Սուվարյան՝ տնտեսագետ
Արամ Մելիքյան՝ տնտեսագետ, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ

Տեղեկություններ թողարկողի ղեկավար պաշտոնյաների մասին.

Պաշտոնը	Ա. Ա. Հ.	Վերջին երեք տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները
Բանկի խորհրդի նախագահ	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի, ծնված 1965թ., ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու,	1998թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահ:
Բանկի խորհրդի անդամներ	Հայրապետյան Ռուբեն Աշոտի, ծնված 1980թ., տնտեսագետ	30.06.2014թ առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ: 29.06.2018թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահի տեղակալ
	Պետրոսյան Լուիզա Աշոտի, ծնված 1982թ., տնտեսագետ-մաթեմատիկոս,	14.06.2013թ առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար:
	Պեր Ֆիշեր, ծնված 1949թ., տնտեսագետ	2003-2014թ.թ.՝ Commerzbank AG, Ֆրանկֆուրտի գլխավոր գրասենյակ, Կենտրոնական և արևելյան Եվրոպայի, ԱՊՀ, Թուրքիայի, Բալթյան երկրների, Մոնղոլիայի ֆինանսական կազմակերպությունների վարչության ղեկավար, Ավագ Գործադիր տնօրեն 2003-2019թ.թ.՝ Commerzbank Eurasija, Մոսկվա, Խորհրդի անդամ 2003-2016թ.թ.՝ Գերմանա-ուկրաինական համաժողովի անդամ, գանձապետ 2007թ. առ այսօր՝ Գերմանա-ռուսական համաժողովի անդամ, գանձապետ 2010-2014թ.թ՝. Գերմանա-թուրքմենական համաժողովի անդամ 2014-2021թ.թ.՝ Центр-Инвест բանկ, Խորհրդի անդամ և Անկախ տնօրեն, Դոնի Ռոստով, ՌԴ 2015-2019թ.թ.՝ ԵԱՀԿ եռակողմ կոնտակտային խմբի Տնտեսության և տնտեսական վերականգնման աշխատանքային խմբի համակարգող 2016-2019թ.թ.՝ Беларусбанк, Խորհրդի անդամ և Անկախ տնօրեն, Մինսկ, Բելառուսի Հանրապետություն 29.06.2018թ. առ այսօր՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ:
	Մելիքյան Արամ Ռոբերտի ծնված 1963թ., տնտեսագետ,	11.08.2016թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ
	Սուվարյան Հրանտ Ռաֆիկի ծնված 1958թ., տնտեսագետ,	2002թ.-20.05.2020թ.թ. ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետ 20.05.2020թ.-30.06.2020թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի խորհրդական 30.06.2020թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ

Խորհրդի նախագահը, տեղակալը և քարտուղարը ընտրվել են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 17.06.22թ.-ին կայացած խորհրդի նիստում:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**